

Կենսապոլիմերների կառուցվածքային անոտացիան *in silico* մեթոդների ամբողջությունն է կենսաբանական մակրոմոլեկուլների կառուցվածքների և ֆիզիկաքիմիական հատկությունների ստացման, ներկայացման և մանիպուլյացիայի համար, որոնք կախված են կամ ազդում են մոլեկուլների եռաչափ կառուցվածքների վրա: Այս առարկան ն ուսումնասիրում է կենսաբանական մակրոմոլեկուլների կոնֆորմացիոն հատկությունների մոլեկուլային մոդելավորման առարկան, խնդիրները և գործնական կիրառումը: Առարկան հիմնված է կառուցվածքային կենսաինֆորմատիկայի գործնական և տեսական ասպեկտների վրա, ինչն ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերված հմտություններն օգտագործել սեփական փորձերում: Դասընթացը նախատեսված է չորրորդ կուրսի ուսանողների մոտ ձևավորելու տեսական և գործնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նրանց հետագայում կենսաինժեներիայի և կենսաինֆորմատիկայի ոլորտի մասնագետ դառնալու համար: